ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2024 թվականի №-Ա

«ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի դեկտեմբերի 20-ի և ի լրումն ներկայացված 2024 թվականի հունվարի 10-ի գրությունների ուսումնասիրության շրջանակում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հոկտեմբերի 31-ի №405Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0624 լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների),

բ) «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» կետի համաձայն՝ ընկերությունը պարտավոր է արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը,

գ) Հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի

ուսումնասիրության նպատակով, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2024 թվականի մայիսի 8-ի №ԳԲ/34.1-Մ2-5/1942-2024 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում 2024 թվականի մայիսի 31-ի գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ 2021 թվականի նոյեմբերի 19-ին տեղի ունեցած Ընկերության մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված տեղյակ չի եղել, որ ԼԷ №0624 լիցենզիան ստանալու համար Ընկերությանը պատկանող հողամասերը լրիվությամբ չեն ներկայացվել Հանձնաժողով: Մաժամանակ, նշել է, որ ներկայացված համապատասխան նպատակային (գործառական) նշանակությամբ հողամասերի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենները և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասերի հատակագծերը, այդ թվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրի Արխաշան 3 (կադաստրային ծածկագիր՝ 09-028-0311-0003), 10 (կադաստրային ծածկագիր՝ 09-028-0314-0005), 11 (կադաստրային ծածկագիր՝ 09-028-0303-0007) հողամասերը ձեռք են բերվել դեռ 2013 թվականին, որոնց համապատասխան իրավունքների (դրանց փոփոխության) գրանցումները տեղի են ունեցել 2023 թվականի դեկտեմբերի 19-ին (կադաստրային ծածկագիր՝ 09-028-0311-0003), 2023 թվականի դեկտեմբերի 14-ին (կադաստրային ծածկագիր՝ 09-028-0311-0005 և կադաստրային ծածկագիր՝ 09-028-0311-0007),

ե) Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №405Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 26-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են նույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ նույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ,

զ) Ընկերությունը ԼԷ №0624 լիցենզիայում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումի շրջանակում ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի №5/26.5/14673 գրությունը, առ այն, որ «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ընթացքում 2018-2022 թվականներին իրականացված նախագծային

փոփոխությունները ենթակա չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, չեն առաջացնում Ընկերությանը տրամադրված №00063 ջրօգտագործման թույլտվության պայմանների և փոքր հիդրոէլեկտրակայանի ջրաէներգետիկական ցուցանիշների փոփոխություն,

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներով համապատասխան իրավունքների (դրանց փոփոխությունների)՝ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին և 2023 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված գրանցումները հանդիսանում են լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի փոփոխություններ, որոնց մասին Ընկերությունը «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» կետի համաձայն պարտավոր էր Հանձնաժողովին տեղեկացնել նախապես: Մինչդեռ, Ընկերությունը նշված փոփոխության կատարման մասին նախապես տեղեկացնելու փոխարեն տեղեկացրել է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» կետի պահանջի խախտմամբ՝ իրավունքների գրանցումից հետո: Միաժամանակ, Ընկերությունը խախտել է նաև ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 26-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ պարտավոր էր Հանձնաժողովին անմիջապես տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են նշված լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող էին դառնալ նույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ: Մասնավորապես, Ընկերությունը Հանձնաժողովին չի տեղեկացրել Կայանը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի տրամադրման հայտով ներկայացվածից տարբերվող այլ հողամասերում կառուցելու հանգամանքի մասին, որը կարող էր հանգեցնել ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների, մասնավորապես պայմանների 6-րդ կետում նշված՝ Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների խախտման, իսկ Ընկերության մատնանշած փաստարկը՝ այն է Ընկերության բաժնեմասերի սեփականատերերի փոփոխությունը, չի կարող հիմք հանդիսանալ թույլ տրված խախտման համար նախատեսված պատասխանատվությունից ազատվելու համար,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 7-րդ, 12-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հուլիսի 2024թ.